

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 հունվարի 2020 թվականի N 21-Ա

**«ՄԵՂՐՈՒ ՏԱՐԱԾԱԾՐՋԱՆԱՅԻՆ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ
ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԸ
ՆՎԱԶԵՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ
ՄԱՐԶՊԵՏԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 12-Ի N 158-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասով, 67-րդ հոդվածի 1-ին մասի «ա» և «ը» ենթակետերով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 19-ի N 1863-Ն որոշման 1-ին և 2-րդ կետերը՝

որոշում եմ.

1. «Մեղրու տարածաշրջանային բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության 1599337728 (մեկ միլիարդ հինգ հարյուր իննսունինը միլիոն երեք հարյուր երեսունյոթ հազար յոթ հարյուր քսանութ) ՀՀ դրամ կազմող կանոնադրական կապիտալը նվազեցնել 29601792 (քսանինը միլիոն վեց հարյուր մեկ հազար յոթ հարյուր իննսուներկու) ՀՀ դրամով՝ բաժնետոմսերի մարման միջոցով: Նվազեցումից հետո կանոնադրական կապիտալը սահմանել 1569735936 (մեկ միլիարդ հինգ հարյուր վաթսունինը միլիոն յոթ հարյուր երեսունհինգ հազար ինը հարյուր երեսունվեց) ՀՀ դրամ:

2. Հաստատել կանոնադրության փոփոխությունը և Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2010 թվականի օգոստոսի 12-ի N 158-Ա որոշմամբ հաստատված «Մեղրու տարածաշրջանային բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության 4.2 կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 1569735936 (մեկ միլիարդ հինգ հարյուր վաթսունինը միլիոն յոթ հարյուր երեսունհինգ հազար ինը հարյուր երեսունվեց) ՀՀ դրամ, որը կազմում է 298656 (երկու հարյուր իննսունութ հազար վեց հարյուր հիսունվեց) հատ հասարակ (սովորական) անվանական բաժնետոմս, մեկ բաժնետոմսի անվանական արժեքը կազմում է 5256 (հինգ հազար երկու հարյուր հիսունվեց) ՀՀ դրամ:

Ընկերության բոլոր 298656 (երկու հարյուր իննսուհինգ հազար վեց հարյուր հիսունվեց) սովորական բաժնետոմսերը տեղաբաշխված են, սեփականության իրավունքով պատկանում են Հայաստանի Հանրապետությանը և լրիվ վճարված են նրա կողմից:

Ընկերության բոլոր բաժնետոմսերը հասարակ (սովորական) են»:

3. Հանձնարարել «Մեղրու տարածաշրջանային բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրենին՝ ապահովել կանոնադրության փոփոխության պետական գրանցումը Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

22.01.2020




**ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Հ. ՊՈՂՈՍՅԱՆ**

Получено в ГИО СЯН ХУНАН 4005640117

2020թ. հունվարի 22
ք. Կապան

Հաստատված է
Հայաստանի Հանրապետության
Սյունիքի մարզպետի 2020 թվականի
հունվարի 22-ի N 21 - Ա որոշմամբ
«Սյունիքի մարզպետ»



Կազմված է 22.01.2020թ. և բաղկացած է 1 թերթից
Տպագրված է ընդամենը 2 օրինակ
ՕՐԻՆԱԿ - - -
ԳՐԱՆՑՎԱԾ Է

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ
ՌԵԳԻՍՏՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ
ԿՈՂՄԻՑ 13.08.2010թ.

Գրանցման թիվ- 222.120.01255

Վկայական 03 Ա 089213

ՀՎՀՀ 09417527

13.08.2010թ. գրանցված կանոնադրության
Թիվ - - - - փոփոխությունը գրանցված է
իրավաբանական անձանց պետական
ռեգիստրի տարածքային բաժնի կողմից

« » ----- 2020թ

«ՄԵՂՐՈՒ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն /ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ/

1. «ՄԵՂՐՈՒ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.
 - 1). Ընկերության կանոնադրության 4.2 կետը կարդալ հետևյալ նոր խմբագրությամբ.
Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 1569735936 (մեկ միլիարդ հինգ հարյուր վաթսուներեք միլիոն յոթ հարյուր երեսունհինգ հազար ինը հարյուր երեսունվեց) ՀՀ դրամ, որը կազմում է 298656 (երկու հարյուր իննսունույթ հազար վեց հարյուր հիսունվեց) հատ հասարակ (սովորական) անվանական բաժնետոմս, մեկ բաժնետոմսի անվանական արժեքը կազմում է 5256 (հինգ հազար երկու հարյուր հիսունվեց) ՀՀ դրամ:
Ընկերության բոլոր 298656 (երկու հարյուր իննսունույթ հազար վեց հարյուր հիսունվեց) սովորական բաժնետոմսերը տեղաբաշխված են, սեփականության իրավունքով պատկանում են Հայաստանի Հանրապետությանը և լրիվ վճարված են նրա կողմից:
Ընկերության բոլոր բաժնետոմսերը հասարակ (սովորական) են:
 2. Սույն փոփոխությունը հանդիսանում է «ՄԵՂՐՈՒ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության (գրանցված 13.08.2010թ.) բաղկացուցիչ մասը: